

## ՉԵՂՉՈՒՄԸ ԲԱՐԴ ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

### ՍՏԵԼԼԱ. ԹՈՐՈՍՅԱՆ

Նախադասության մեջ, գրավոր կամ բանավոր խոսքում, շատ բառեր, բառակապակցություններ հաճախ չեն դրվում կամ ասվում, քանի որ դրանց դադավարը, մտապատկերը գոյություն ունի նախադասության մեջ, հետևապես ավելորդ է դրել կամ կրկնել հասկանալի բառերը և նախադասությունը ծանրաբեռնել: Այդ տեսակետից առանձնանում են հատկապես գործողություն և գործողության իմաստ արտահայտող բառերը՝ ստորոգյալը, օժանդակ բայը և բայական հանգույցը, որովհետև դրանց իմաստը, մտապատկերը նախադասության մեջ ավելի ուժեղ են արտահայտվում: Իսկ հասկանալի բառերը կրկնելը ոչ միայն ավելորդություն է, այլև՝ ձանձրալի: Այդ ամենից դատ, այդպիսի զեղչումները նաև ժողովրդական լեզվամտածողություն են, քերականական ու ոճական կարևորագույն միջոց: Խոսքը դառնում է պատկերավոր, հակիրճ, սահուն: Սույն հարցի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն չկա: Մի քանի հեղինակներ իրենց աշխատություններում համառոտ խոսել են այդ մասին, արտահայտել իրենց նկատառումները<sup>1</sup>:

Այդ նախադասությունների մասին Մ. Աբեղյանը գրում է. «Համադասության մեջ կապակցվում են իրարուց անկախ խոսքերը, որոնք բովանդակության մեջ միմյանց հավասար են և իրար մոտ դրվում են կամ իբրև մի ամբողջության համազոր մասեր (համադաս խոսքեր), կամ իբրև մի ղլխավոր խոսքի համազոր երկրորդական խոսքեր: Համադաս խոսքերից մեկի մեջ, գլխավորապես երկրորդի մեջ հաճախ բայը և ուրիշ բառեր զեղչվում են»<sup>2</sup>: Հենց նույն տեղում էլ հեղինակը բերել է հետևյալ օրինակը. «Դատավորների՝ գեմ բողոքեմ, թե՞ փաստաբանների»: Նկատելի է, որ երկրորդ նախադասության մեջ զեղչված են դեմ, բողոքեմ բառերը, հետևաբար համազոր է նախորդին:

Բարգ համադասական նախադասության վերաբերյալ նույնպիսի տեսակետ է արտահայտել պրոֆ. Վ. Առաքելյանը: «Բարգ համադասական նախադասություն է կոչվում երկու ավելի կամ սլակաս հավասարազոր պարզ նախադասությունից կազմված այնպիսի բարգությունը, որը քերականորեն, իմաստային և հնչերանդային մի ամբողջություն է կազմում»<sup>3</sup>: Այնուհետև բերում է մեծաթիվ այնպիսի օրինակներ, որոնց մեջ երկրորդ նախադասություններն ամենևին էլ համազոր կամ հավասար չեն նախորդներին:

<sup>1</sup> Տե՛ս Ս. Աբեղյանի «Ժամանակակից հայերենի քերականություն». Երևան, 1969, էջ 322-323: Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն», պարզ նախադասություն. Երևան, 1958, 1, էջ 150-151: Գ. Ջահուկյանի «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները». Երևան, 1974, էջ 371-394: Ռ. Իշխանյանի «Արդի հայերենի շարահյուսություն». Երևան, 1986, էջ 296-299:

<sup>2</sup> Մ. Աբեղյանի «Հայոց լեզվի տեսություն». Երևան, 1965, էջ 652:

<sup>3</sup> Վ. Առաքելյանի «Հայերենի շարահյուսություն». Երևան, 1964, էջ 294:

ըին: Ձեղչված են կա՛մ ստորոգյալները, կա՛մ օժանդակ բայերն ու բայական հանգույցները, կա՛մ այլևայլ բառեր: Ահա հեղինակի բերած նախադասություններից մեկը. «Թաղալորն էս որ լսեց, կատաղությունը բռնեց, ու գոռաց»<sup>4</sup>:

Բառերի, բառակապակցությունների, առավելապես ստորոգյալների մեծաթիվ զեղչումներ կան բարդ համադասական նախադասություններում: Վաղուց ի վեր հայ քերականագիտության մեջ ստեղծվել է այն կարծիքը, որ համադասական նախադասությունները կազմված են համազոր պարզ նախադասություններից և իմաստային ու հնչերանգային միասնություն են: Ինչ խոսք, այդ բնութագրությունը համապատասխանում է համադասական նախադասությունների գերակշիռ մասին:

Սակայն մեծաթիվ են այն բարդ համադասական նախադասությունները, որոնց մեջ զեղչված են բառեր, բառակապակցություններ և հատկապես՝ ստորոգյալը:

Գործողություն կամ գործողության իմաստ արտահայտող բառերի, բառակապակցությունների զեղչումները բազմաբնույթ են, բազմատեսակ:

Ստորոգյալի զեղչումը ամենից առաջ հատուկ է խոսքի մեծ վարպետներին, բարձրաոճ հեղինակներին: Բակունցը հաճախ լրիվ չի արտահայտում նախադասության միտքը, մտածելու շատ բան է թողնում ընթերցողին: Այնքան հարուստ են ու բազմազան զեղարվեստական պատկերավորման միջոցները, լեզուն ու ոճը, որ ընթերցողն իսկույն պատկերացնում է պակաս թողածը: Օրինակներում զեղչված ստորոգյալներն ընդգծվում են: «Ոչ Պանինը երևաց, ոչ էլ՝ շները»<sup>5</sup>: Ձեղչված է երևացին: «Այգ սովորույթը մնացել էր այնպես հաստատ, ինչպես հարևան հաստաբուն ընկուզենին»: Ձեղչված է մնացել էր (ԱԲ, 19): «Բազին ուզում էր, որ իր որդին էլ հյուրասեր լինի, աղաթ սիրող, մեծին հաբգող, գյուղամիջում չենք-չնորհքով մի մարդ» (ԱԲ, 20): Երեք կապակցության մեջ էլ զեղչվել է լինի բայը, որը ստորոգյալի մասն է, հանգույցի դեր ունի: «Գյուղացիք բնազդով զգում էին, որ թանկություն սիրտի լինի, մեծ կոտորած ու զրկանք» (ԱԲ, 23): Երկրորդ կապակցության մեջ զեղչվել է սիրտի լինի ստորոգյալը:

— Թո՛ղ, Դիլան, գնա քեզ համար... (ԱԲ, 74) անավարտ նախադասության մեջ զեղչվել են ասլորի, ամուսնացիր ստորոգյալները: Այլ օրինակ. «Քամին խշշացրեց թփերը, ինչպես Սոնան սիմֆոնիայի երկար ցողունները» (ԱԲ, 78): Ձեղչված է խշշացրեց ստորոգյալը: «Հեղեղը ծղոտն էլ էր քշում, մրջյունին էլ» (ԱԲ, 171): Ձեղչված է քշում էր: «Տերության խարժը ուզում են: Չտվողին՝ Սիբիր» նախադասության երկրորդ մասում զեղչվել է կաքսորեն (ԱԲ, 210): Նույն էջում՝ «Բե՛ր, թե չէ Սիրիր, հա՛...» (նույն զեղչումն է): «Կռացա և համբուրեցի ճուտիկի ճակատը, ինչպես Օհան ապերը իմ ճակատը» (ԱԲ, 159): Այստեղ էլ զեղչված է համբուրեց ստորոգյալը:

Հարցի քննարկումը շարունակենք այլ հեղինակներից քաղած նախադասություններով:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 296:

<sup>5</sup> Ա. Բ ա կ ո ն ց. Երկեր. Հ. 1 (այսուհետև տեքստում՝ ԱԲ), Երևան, 1976, էջ 15:

– Ես գնում եմ, կարասը լիքը օձ է դառնում, սրանք են գնում ոսկի<sup>6</sup>:  
 Ջեղչված է դառնում է:  
 – Նյութն է քաշում, նյութը, – ձայնեց ծեր վանականը՝ (ԴԴՎ, էջ 138):

Նշանակում է պարսիկը քաշում-տանում է երկրի ունեցվածքը, ուժը:  
 – Հաղկերտը նախարարից է քաշում, երկուսն էլ շինականից (ԴԴՎ, էջ 198):

Ջեղչված է քաշում-տանում է ստորոգյալը:  
 – Ավանդս քեզ իբրև հայոց աշխարհի ավանդ: Սրբությամբ, – ասաց վարդանը Ատոմին (ԴԴՎ, էջ 953):

Վարդանը իր խոսքում չի արտաբերում հանձնարարում եմ կամ հանձնում եմ և կատարիր ստորոգյալները, քանի որ այդ բառերը հասկանալի են ամբողջ գորարանակին:

– Հոգուս պարտքը, սպարապետ, – պատասխանում է Ատոմը:  
 Այստեղ էլ նա չի արտաբերում լինի բառը:

Դիմելով Լաբրտին՝ Համլետն ասում է. «Համլետն է արդյոք քեզ վիրավորել»: Ինքն էլ պատասխանում է. «Երբեք Համլետը»<sup>8</sup>: Ջեղչված է չի վիրավորել ստորոգյալը:

Ստորոգյալի զեղչումները մեծաթիվ են Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում: Բերենք մեկ օրինակ. «Մի խստությամբ ընդհարվիր մեծդ փոքրիս հետ» տողից հետո հաջորդ 10 տողերում զեղչել է նույն մի ընդհարվիր ստորոգյալը: Ինչպես՝

Լույսդ ստվերիս հետ,  
 Բնությամբ բարիդ ի բնե չարիս հետ,  
 Քաղցրությունդ ճշմարիտ համակ գառնությանս հետ,  
 Փառավորյալդ ամփոփող իսպառ անարգիս հետ... և այլն<sup>9</sup>:  
 Նույնը տեսնում ենք Պարույր Սևակի ստեղծագործություններում: «Եղիցի լույս» գրքի «Ամպոտ եղանակ» բանաստեղծության մեջ ստորոգյալները զեղչվել են հետևյալ կերպ.  
 Ու խշրտուքը մրսող ծառերի  
 Հրդեհում է ինձ, կրակի մատնում  
 Ձինգիդ խանի պես (այսինքն հրդեհում ե կրակի է մատնում Ձինգիդ խանի պես, Լենկ Թեմուրի պես):  
 Ու թուրքի նման<sup>10</sup>:

Վերջին երեք տողում զեղչված են հրդեհում է, կրակի մատնում ստորոգյալները:  
 Նույն հեղինակի «Խեղկատակը» բանաստեղծությունը, որը բաղկացած է վեց տնից, ունի հարց ու պատասխանի բնույթ:

<sup>6</sup> Հ ո վ հ . Թ ու մ ա ն յ ա ն . Երկեր . հ . 1 (այսուհետև տեքստում՝ ՀԹԵ), Երևան, 1958, 448:  
<sup>7</sup> Դ . Դ Ե մ ի Ր Ճ յ ա ն . Վարդանանք (այսուհետև տեքստում՝ ԴԴՎ), Երևան, 1987, 138:  
<sup>8</sup> Վ . Շ Ե ք ս պ ի Ր . Ընտիր երկեր (այսուհետև տեքստում՝ ՇԵԲ.) հ . 1, Երևան, 1951, էջ 107:  
<sup>9</sup> Գ . Ն ա Ր Ե կ ա ց ի . Մատյան ողբերգության . Երևան, 1960, էջ 67:  
<sup>10</sup> Պ . Ս և ա կ . Եղիցի լույս (այսուհետև տեքստում՝ Սևակ), Երևան, 1969, էջ 27:

Բոլոր պատասխան նախագասուլթյուններում զեղչված են ստորոգյալները: Ինչպես՝

-Որտե՞ղ են ապրում քամիները:

-Պալատների մեջ...

Ջեղչված է ապրում են:

-Որտե՞ղ է պահված արյունը մեր տաք:

-Մեր հին թշնամու եղունգների տակ:

Մկրատի կարոտ կեռ եղունգներում...

Ջեղչված է պահված է (Սևակ, 47):

Ու գալու է մի ժամանակ, երբ որ պիտի մարդիկ մերպեսներին երկրպագեն՝

Ոչ կուռքի պես,

Ոչ էլ աստծու,

Այլ... հերոսի... (Սևակ, 83):

Երեք տողում էլ զեղչված է երկրպագեն ստորոգյալը, իսկ վերջին երկու տողում նաև՝ պես կապը:

Ջուլիետը գիմում է Ռոմեոյին.

-Ասա՛, դու ինչպե՛ս գտար այս վայրը, ո՞վ առաջնորդեց:

-Սե՛րը (Շեքս, 434):

Ջեղչված է առաջնորդեց ստորոգյալը:

Մեր գեղարվեստական գրականությունը հարուստ է ըաղապրյալ ստորոգյալներով, որոնք մեծ կշիռ ունեն չափածոյում: Այդպիսի ստորոգյալ են կազմում վերագիրը և լինել վերացական բայը, որը հանգույցի դեր է կատարում:

Ես հովիկ լինեի,

Դու՛ նազուկ ցարասի,

Ես եղնիկ լինեի,

Դու՛ աղբյուր պազպաջուն,

Ես թիթեռ լինեի,

Դու՛ կարմիր բոց-կրակ<sup>11</sup>...

Դու նենգոտ քնքշությամբ ժպտացիր

Արևոտ ժպիտով իմ հոգուն...

Սիրո խոսք և համրույր և խոստում<sup>12</sup>...

Վերջին տողում հեղինակը զեղչել է ասացիր և տվիր ստորոգյալները:

Մեկ օրինակ ևս.

Գնում եմ ուղին իմ ծուռ

Եվ գիտեմ՝ դեպի կորուստ... (ՎՏԵ, 135):

Ջեղչված է գնում եմ...

Մարութխանյանը հերթական անգամ Միքայելին մղում է Սմբատի դեմ՝ իր խարդախ նպատակներն իրականացնելու համար:

— Բայց վկա է աստված, քեզ կխարի... զգո՛ւյշ զգո՛ւյշ զգո՛ւյշ...<sup>13</sup>

Ջեղչված է ստորոգյալի մասը ելիր /զգո՛ւյշ եղիր/:

<sup>11</sup> Ա. Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. Երկեր (այսուհետև՝ ԻՍԵ), 1987, էջ 162–163:

<sup>12</sup> Վ. Տ Ե Ր Յ ա ն. Երկեր (այսուհետև տեքստում՝ ՎՏԵ). Երևան, 1989, էջ 125:

<sup>13</sup> Ա. Շ Ի Ր Վ ա ն զ ա դ Ե. Երկերի մոդովածու (այսուհետև տեքստում՝ ՇԵԺ). Հ. 9, Երևան, 1959, էջ 148:

Սմբատը դիմում է իր տիկնոջը և ասում.

– Նախանձելի չէ այն մարդու դրուժյունը, որի կինը համառությունը կամքի ուժ է համարում, իսկ չարությունը՝ բարոյական պայքար (ՇԵԺ, 284):

Ձեղչված է համարում է:

Թե՛ չափածո, թե՛ արձակ խոսքի գեղարվեստական վառ պատկերավորման համար չափազանց կարևոր նշանակություն ունեն օժանդակ բայերի ու բայական հանգույցների անհրաժեշտ ու նպատակային զեղչումները, որոնք առավելապես հատուկ են քնարերգություն մեծ վարպետներին: Այդպիսի զեղչումներով էլ բանաստեղծությունները դառնում են գեղարվեստական կատարելություններ՝ գեղեցիկ կշռությամբ ու հնչերանգով և չափաբերութամբ, որոնց գումարվում է բանաստեղծությունների նվազայնությունը: Բերենք տարաբնույթ օրինակներ. նախ՝ Իսահակյանից.

է՛յ, ջան – հայրենիք, ինչքա՛ն սիրուն ես,

Սարերդ կորած երկնի մովի մեջ,

Ջրերդ անու՛շ, հովերդ անու՛շ,

Մենակ բալեքդ արուն ծովի մեջ (ԻՍԵ., 66):

Եթե վերականգնենք զեղչված հանգույցները, այդ սքանչելիքը կկորցնի իր հմայքն ու դեղեցկությունը, ինչպես

Երկրորդ տող կորած /են/,

Երրորդ տող Ջրերդ անուշ /են/, հովերդ անուշ /են/,

Չորրորդ տող՝ արուն ծովի մեջ /են/:

Բառերի կրկնութամբ և օժանդակ բայերի զեղչումով բանաստեղծը խոր թախիժ է ստեղծում հանրահայտ «Շշուկ ու շրշյուն» բանաստեղծության մեջ:

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում

Եվ շշնջում ես և անուշ շրջում,

Պայծառ տրամուլթյամբ ինձ ես անըջում

Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում...

Եվ ժպտում ես ինձ, ակնարկում քնքուշ,

Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում... (ՎՏԵ, 126):

Այլ օրինակներ. «Սոնան օձի պես կեռումեռ արեց, կարոտով խնդրեց խոստացավ...» (ԱԲ, 1, 74): Հեղինակը նախադասության միտքը չի ավարտում: Ընթերցողը խոստացավ բառից կռահում է, որ Սոնան ուզում է ասել, որ էլի կգա... Նշանակում է զեղչված է որ էլի կգա երկրորդական նախադասությունը: Կողակը մասնագիտական աչքով գննում է պարսիկների ձիերը և ասում.

–Սոնների կոճերը հաստ են, բայց դիմացկուն չեն: Ո՞ւր են մեր նժույգները, հեծյալներն էլ մերոնց չեն հասնի (ԴԴՎ, 231):

Ձեղչված են մեր նժույգներին բառակապակցությունը և պարսիկ բառը:

–Ա՛խ, նանի ջան, ի՛նչ լավ էր սիրտդ իմացել, – հառաչում էր Գիքորը, – ա՛խ, ինչ շուտ վերջացավ, ի՛նչ վատ վերջացավ (ՀԹԵ, 1, 317):

Այս նախադասության մեջ զեղչված է կյանքը ուղիղ խնդիրը: Գիքորը բազազ Արտեմի դժոխքում զգացել է, որ իր մատաղ կյանքը վերջացել է այդքան շուտ:

Մեծարենցի «Արևիկ» հիասքանչ բանաստեղծությունը ամբողջությամբ արևի տենչանքն է: Ծանր հիվանդ պատանի բանաստեղծը արևից է կյանք խնդրում:

Շողա, ով արև, շառավիներովդ ոսկեծայր,

Շողա՛, շողա՛, բարի արև, հիվանդ եմ...<sup>14</sup>

Բանաստեղծության վերջին մասում /հիվանդ եմ/ զեղչել է շողա՛, շողա՛, բարի արև բառերը:

Ճակատամարտն սկսելուց առաջ Վարդանը կռահում է, որ պարսիկները միջոցից (այսինքն՝ կենտրոնից) չեն հարձակվի, ու դիմում է զորագլուխներին.

-Ձգո՛ւյշ, թևերում... (ԴԴՎ, 940):

Այստեղ զեղչվել է՝ ուշադրությունը դարձնել դեսիլի թևերը բառակապակցությունը:

«Եվ ինչ-որ մի ծանր բեռ ընկավ մարդկանց հոգուց, տարտամը, սրտմաշոռքը, անորոշ վիճակը» (ԴԴՎ, 875): Երկրորդ նախադասության մեջ զեղչված է ընկավ մարդկանց հոգուց բառակապակցությունը:

«Հովե՛ր կանցնին, ցորյաններս հուշիկ-հուշիկ կարթնանան, ծովե՛ր կանցնին...»<sup>15</sup>

Երկրորդ նախադասության մեջ զեղչվել է ամբողջ նախորդ նախադասությունը՝ Ու ցորյաններս հուշիկ-հուշիկ կարթնանան...

-Իմ տերը ձեր տիրոջից առավել է, պարոն...

-Ստում ես... (Շեքս., 1, 412):

Երկրորդ նախադասության մեջ զեղչված է ձեր տերը իմ տիրոջից առավել է նախադասությունը:

«Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր չպրտում մերթ սև թավիչե գլխարկով մի գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարագգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարե քանդակներ, կիսավեր պարիսպներ, նրանց հիմքի մոտ՝ ալպիական ծիրանագույն մանուշակներ» (ԱԲ, 195): Երեք տեղ զեղչված է փոխաբերական իմաստով ափ էր չպրտում նախադասությունը:

-Ձգիտեմ՝ կկործանե՞նք արյաց պետությունը, բայց գիտեմ, որ ես պատրաստ եմ մեռնելու. գործի համար (ԱԲ):

Այստեղ գործի համար թերի նախադասության մեջ զեղչված է ես պատրաստ եմ մեռնելու նախադասությունը: Այլ օրինակներ. «Մեր թաղի դերեզմանատանը թաղված է Անա գիգին. ոչ դիր, ոչ հուշարձան» (ԱԲ, 1, 255): Երկու բառով հեղինակը այն միտքն է արտահայտում, որ դերեզմանը լքված է անտերունչ, ընտանիքը՝ քայքայված, կործանված: «Իրիկունը տավարածի տունը սգատան էր նման. ոչ հաց, ոչ սովորական զրույց» (ԱԲ, 26): Երկրորդ նախադասության մեջ զեղչված են ուտում էին, անում էին բառերը:

Նմանատիպ օրինակները բազմազան ու բազմաթիվ են: Ասվածից հետևում է, որ դրանք բոլորն էլ ակնհայտորեն ցույց են տալիս, որ երկրորդ նախադասությունները հաճախ համազոր չեն առաջիններին:

<sup>14</sup> Մ. Մ ե ծ ա ր ե ն ց. Երկեր. Երևան, 1986, էջ 52:

<sup>15</sup> Դ. Վ ա ր ու ժ ա ն. Երկերի ժողովածու. Երևան, 1986, էջ 171:

Բարդ Համադասական նախադասությունների կազմի մեջ են մտնում կախյալ շարահարույթյամբ նախադասությունները, որոնք էապես տարբերվում են անկախ շարահարույթյամբ բարդ նախադասություններից: Վերջիններս թեպետ կապակցվում են առանց շղկապների, բայց բարդության մեջ մտնող նախադասությունները պահպանում են իրենց ինքնուրույնությունը: Կախյալ շարահարույթյամբ նախադասություններն իրենց առանձնահատկություններով մոտենում են Համադասական նախադասություններին և ուսումնասիրվում են որպես դրանց մի յուրահատուկ տեսակ: Սակայն միաժամանակ մերձ Հարաբերություն ունեն բարդ ստորադասական նախադասությունների Հետ: Կախյալ շարահարույթյան երկու մասերը կախվածություն ունեն միմյանց նկատմամբ և արտահայտում են ստորադասական տարբեր Հարաբերություններ:

Սովորաբար այդպիսի նախադասություններում ստորադասական շղկապներ չեն կիրառվում: Այլ կերպ տեղի է ունենում շղկապների զեղչում: Առաջին և երկրորդ նախադասությունների տրոհումը կատարվում է բուժով, սակավ դեպքերում ստորակետով:

Մեր Համոզմամբ՝ դրանք սկզբնապես եղել են բարդ ստորադասական նախադասություններ: Դարերի ընթացքում ժողովուրդը այդ նախադասություններում զեղչել է բառեր, բառակապակցություններ, հղկել է խոսքը, դարձրել թեկավոր, պատկերավոր, Համառոտ, ասացվածքների արժեք ստացած արտահայտություններ: Եվ չնայած այդ նախադասությունների Համառոտությանը, պահպանել են ստորադասական նախադասության իմաստը: Եվ քանի որ բայի Համակարգում ներգործական բայերը գերակշռություն են կազմում, նույն կերպ էլ կախյալ շարահարույթյան մեջ ուղիղ խնդիր նախադասությունները գերազանցում են մյուս տեսակներին:

Առաջին նախադասության ստորագյալը լինում է ներգործական բայ, Հետևաբար երկրորդ նախադասությունը առաջին նախադասության բայ-ստորագյալի ուղիղ խնդիրն է: Օրինակներ՝

«Նս ձեզ ասում եմ կգա Հոգու սով, և դուք կքաղցեք ճոխ սեղանի քով» (ԻՍԵ, 89):

- Գիտե՛ս՝ մեր նախարարներից մեկը աչք է դրել Անահիտին:
- Ասել է՝ Ասոմը Հարսնախոսության կգա շուտով (ԴԴՎ, 243):
- Ասում եմ՝ դուրս արա կորչի, ես ծառայի բանն էլ կանեմ (ՀԹԵ, 1, 320): Տեսան՝ տանը չի կարողանում ծառայի, խանութ տարան:
- Ասում եմ՝ դնանք, մի մետրիկեն Հանենք, տեսենք ինչ ենք անում (ՀԹԵ, 1, 367):

Նկատելի է, որ խնդրային Հարաբերությամբ կապակցված բոլոր նախադասություններն ունեն որ, թե ստորադասական շղկապները, որոնք չեն կիրառվել:

Հետևյալ կախյալ նախադասություններն արտահայտում են Հիմնական նախադասության գործողության պայմանը:

«ԱչխարՏը դրան տայի՛ր՝ աչքը էլի մըջունի տարած մեկ դարի Հատիկի վրա կլներ» (ԻՍԵ, 420): Ձեղչված է եթե պայմանի շղկապը:

- Դե՛հ, ավելի լավ, դուրս դաս՝ սարն աչքիդ ավելի անուշ, նշանածո՛ ավելի սիրուն (ԻՍԵ, 496):

Գործողությունների նպատակ արտահայտող կախյալ նախադասությունը սովորաբար լինում է հիմնական նախադասության նպատակի պարագան: Գեղարվեստական գրականության մեջ բավականին շատ են այնպիսի նախադասությունները, որոնք նույնպես արտահայտում են լեզվաոճական հարուստ նրբերանգներ: Այդ նախադասությունները կապակցվում են որպեսզի, որ շաղկապներով, որոնք զեղչվում են: Օրինակներ՝

Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա,

Դու չմրսես ձմռան ցրտում, բոլորը քեզ<sup>16</sup>:

Ինձ մոտ արի՛ ձվածեղ անեմ...

Ինձ մոտ արի՛ բլիթ տամ...

Արի՛ մեղ մոտ հարսանիք<sup>17</sup>:

Միամիտ չեմ հավատամ քեզ,

տառապանքս փորձ ունի (ԻՍԵ, 174):

Պատճառի հարաբերությունը կախյալ նախադասությունը լրացյալ նախադասության պատճառի պարագան է: Նախադասությունները կապակցվում են որովհետև, քանի որ շաղկապներով, որոնք զեղչվում են:

Օրինակներ՝

Մուրճ կամ զնդան պիտի լինես,

ձշմարտություն չկա ուրիշ:

Տեր կամ ստրուկ պիտի լինես,

ձշմարտություն չկա ուրիշ:

Լուծ կամ լծկան պիտի լինես,

ձշմարտություն չկա ուրիշ (ԻՍԵ, 113):

- Աբրահամ, մի արա այդ բանը, վերը ասված կա, կրակ կթափվի գլխիդ (ՇԵՓ, 472):

- Մանաս, զարթուն կաց, Առաքելը հանկարծ է քեզ նեղը զցելու (ԱԲ, 125):

- Մանաս, տապ արա, Առաքելը պրիստալի տունը ջրի ճամփա է շինել (ԱԲ, 125):

Որովհետև կամ քանի որ շաղկապները ոչ մի նախադասության մեջ չեն գործածվել:

Հայ լեզվաբանության մեջ վաղուց ընդունված է այն տեսակետը, որ բարդ համադասական նախադասության կազմում գտնվող նախադասությունները միմյանց համագոր են: Դրանց գերակշռող մասը, իրոք, համապատասխանում է այդ բնութագրությանը: Սակայն լեզվական փաստերը, ինչպես տեսանք, վկայում են, որ մեծաթիվ են այն նախադասությունները, որոնց մեջ երկրորդ նախադասությունները համագոր չեն նախորդներին: Դրանց մեջ զեղչված են բառեր, բառակապակցություններ, նույնիսկ նախադասություններ և հատկապես ստորոգյալը, օժանդակ բայն ու բայական հանգույցը: Բազմաթիվ զեղչումներ են գրավում նաև ուղիղ խնդրի, պայմանի, նպատակի, պատճառի պարագայի իմաստ ունեցող նախադասություններում: Այնինչ թեկուզ մեկ բառի զեղչման դեպքում նախադասությունը համագոր չէ նախորդին:

<sup>16</sup> Ե. Ջ ա Ր Ե Ն Գ. Հատընտիր. Երևան, 1977, էջ 35:

<sup>17</sup> Հ ո Վ Հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի լրակատար ժողովածու. Հ. 3, Երևան, 1989, էջ 20: